Դ. Վ. Պետրոսյան, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամու- լում, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 2007, 367 էջ։

Դավիթ Պետրոսյանի գիրքը նվիրված է հայ մամուլի գրական ուղղության և դրանում ծավալուն ընդգրկում գտած գրաքննադատության պատմության մի նշանակալի փուլի գիտական վերհանմանը և արժեքավորմանը։ Այստեղ ներհյուսված են մեզանում գրեթե չուսումնասիրված՝ մամուլում բանավեճի մշակույթի զարգացման և դրա առարկայական բովանդակությունը կազմող գրաքննադատական մտքի հիմնահարցերը։ Թվում է՝ բանավիճային ժանրը պետք է որ հանդես գա իբրև ձև՝ գրականագիտական հղացքի դրսևորման համար։ Իրականում մենք գործ ունենք ոչ միայն բովանդակության, այլև ձևի՝ գրական բանավեճի ժանրային արժեքը ըստ ամենայնի գնահատող լուրջ և ընդհանրացնող մի աշխատության հետ։ Հեղինակն իր հետազոտության ընթացքը տարել է և մեկ, և մյուս ուղղությամբ՝ երբեք չխախտելով հետազոտության ներքին տրամաբանությունից բխող համամասնությունը, անհրաժեշտ ուշադրություն դարձնելով և պարբերականների բանավեճին, և դրանում առկա գրականագիտական մտքի դրսևորումներին։ Եվ դարձյալ, և բանավեճը, և գրականագիտական տեսակետները անմիջականորեն կապվում են հայ մամուլի հետ՝ դառնալով նրա պատմության բաղկացուցիչ մասը։ Գրականություն-մամուլ փոխհարա- բերությունների այս կտրվածքը, կարծում ենք, այս աշխատության կարևոր նորույթներից մեկն է։ Մամուլի պատմության տեսակետից նորույթ է նաև XX դարասկզբի գրական բանավեճի լայնածավալ և հանգամանալի հետազոտությունը, որ իրականացվում է առաջին անգամ։

Մեր ժամանակների մամուլը, հատկապես գրական հրատարակությունները, ուսումնառության շատ արժեքավոր ուղղություններ և աղբյուրներ կարող են գտնել այս աշխատության մեջ՝ հատկապես բանավեճի կուլտուրայի և անցյալի գրաքննադատական մտքի արժեքները յուրացնելու իմաստով։ Սրանում ենք մենք տեսնում այս աշխատության արդիական և գործնական նշանակության կարևոր կողմերից մեկը։

I գլխում քննարկվում են բանավեճի պատմության և տեսության հարցերը, բանավեճի, որպես լրագրական ժանրի զարգացման հիմնախնդիրը հայ մամուլի պատմության մեջ և, միաժամանակ, գաղափարական տարակարծությունների դրսևորումները։ Կարծում ենք՝ համոզիչ է պարբերացումը բանավեճի տեսական ու թեմատիկ կտրվածքով, որն ընդգրկում է 1794 թվականից (հայ մամուլի սկզբնավորումը) մինչև XX դ. առաջին տասնամյակների միջև ընկած ժամանակաշրջանը։ Հեղինակը գնահատելի ջանախնդրությամբ կարողացել է զարգացնել իր հետազոտության կարևոր ուղղությունը՝ հայ գրաքննադատական մտքի զարգացման ընթացքը նշված ժամանակագրության սահմաններում։

1850-1860 և 1870-1880-ական թթ. ժամանակաշրջաններն առանձնացնելիս աչքի է զարնում Դ. Պետրոսյանի ճիշտ մոտեցումը, որով նա փաստորեն ճանաչում է հասարակական երկու հոսանք՝պահպանողական և դեմոկրատական։ Սա մենք ճշտում ենք այն տեսակետից, որ հետազոտության անաչառ ընթացքը նրան հասցրել է հասարակական մտքի արհեստական տրոհումների (որով մի ժամանակ իր տեսական առաջադրումներն էր պարտադրում խորհրդային պատմագրությունը) հաղթահարմանը գրաքննադատության մեջ։ Այս հիմնահարցը մշակելիս Դ. Պետրոսյանը հենվում է ժամանակի հայ մամուլի՝ «Հայաստանի»,

«Մասիսի», «Մեղու Հայաստանիի», «Մասյաց աղավնու» և այլ պարբերականների փաստական հարուստ տվյալների վրա։ Հատկապես կանգ առնելով 1870-1880-ական թթ. բանավեճերի գլխավոր ուղղվածության վրա՝ հեղինակը ճիշտ է սահմանում բանավեճերի հիմնահարցերը կամ հակադրության հիմքերը՝ ազգ, եկեղեցի, մշակույթ, եվրոպական ու ազգային արժեքներ, դրանց փոխհարաբերությունների ընկալումները և այլն («Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Նոր դար» և այլ պարբերականների ընձեռած նյութերով)։ Չի կարելի չնկատել նյութի վերաբերյալ հեղինակի բազմակողմանի իմացությունը, հատկապես այն ժամանակ, երբ նա անդրադառնում է ոչ միայն տարբեր հոսանքներ ներկայացնող պարբերականներին, այլև միևնույն հոսանքի, ինչպես և միևնույն հրատարակություններում դրսևորված տարամիտումներին։ Դրանով բացահայտվում է նաև, որ XIX դ. երկրորդ կեսի մամուլը հաղթահարում էր գաղափարական միակողմանիությունն ու բևեռայնությունը, որ և կարելի է համարել ատենախոսության արժանիքներից մեկը։ Դիտարկումը վերաբերում է ոչ միայն մամուլի՝ որպես մշակույթի զարգացման բնութագրին, այլև բանավիճային մշակույթին։ Գրքում ցույց է տրվում նաև վերը նշված ժամանակաշրջանի մամուլում բանավեճերի միակողմանիությունը, սեփական տեսակետները անառարկելիորեն ճիշտ համարելու ձգտումը, հակումը՝ վերհանելու հակառակորդի միայն բացասական կողմերը։ Սրանով է Դ. Պետրոսյանը բացատրում, և հիմնավորված, փոխադարձ հարձակումները, սեփական տեսակետը «բռունցքներով ապացուցելու» նախասիրությունը պարբերական հրատարակություններում։ Հընթացս հեղինակը ուշադրություն է դարձնում բանավեճի մեթոդներին, դրանց պարզունակ ձևերից մինչև համեմատաբար հղկվածները, միակողմանիությունից մինչև ընդհանրացնող մտքի ընթացքը։ Գրաքննադատության զարգացման համեմատ, բանավեճերը մամուլում ստանում են մտավոր հագեցվածություն,դրսևորման ձևերի բազմազանություն, ինչը հստակորեն ի հայտ է գալիս աշխատության II գլխում։ Այստեղ քննարկվում են ռեալիզմի շուրջ բանավեճերը, գեղեցկի և ճշմարտի գեղագիտական արտացոլման հիմնախնդիրները, Էմիլ Զոլայի ստեղծագործության շուրջ հայ մամուլում ծավալված բանավեճերը, բանավեճը «գավառական գրականության» վերաբերյալ, Գր. Զոհրապի ստեղծագործության տարընթերցումները, որպիսիք, հիրավի, ժամանակի գրաքննադատական միտքը հուզող կարևոր հիմնահարցերն էին։

Ռեալիստական գեղագիտությունը դարասկզբին ևս իր տեսական հիմնավորումն էր ստանում բանավեճերի միջոցով և այս իմաստով հեղինակը նուրբ դիտողություններ է անում բանավեճի հասարակական հետաքրքրության, և դրա հանդեպ լսարանի ուշադրության վերաբերյալ։ Ե՛վ Լևոնյան-Շիրվանզադե, և՛ Բաբկեն վարդապետ – Քեչյան-Անտոնյան բանավեճերում Դ. Պետրոսյանը որոշակի նորույթներ է բերում հայ ռեալիստական գեղագիտության, ռեալիզմ – նատուրալիզմ փոխհարաբերակցության գնահատականների առթիվ։ Մեզ առավելապես հետաքրքրում են այս՝ 1890-ական թթ. բանավեճերի քննարկումն ու բնութագիրը, հոգեբանական գործոնի նշանակությունը կողմերի համար, սրված կամ ծայրահեղ գնահատականների առկայությունը։ Հեղինակը ի հայտ է բերում, սակայն, սրանց միավորող գործոնը, այն, որ ամենակարևորը բանավեճերում ձևավորվող ճշմարտություններն են, որոնք անմիջապես շրջանառում են գեղագիտական մտքի ոլորտում և իրենց նպաստն են բերում դրա զարգացմանը։ Ընդսմին, լուրջ աշխատանք է կատարված բազմակողմ բանավիճողների տարբեր կամ միմյանց հարող տեսակետները խմբավորելու ուղղությամբ, որ և չի հապաղել ապացուցելու իր արդյունավետությունը։ Այս տեսանկյունից բացահայտվում է Զոլային բարոյական մեկնակետից բացատրելու՝ արևմտահայ գրագետների միտումը (որ, կարծում ենք, ռոմանտիկական գեղագիտական մտքի հարատևող ազդեցության արդյունքն էր) և դրանից տարբերվող արևելահայ գրա-

քննադատության շեշտադրումը՝ Զոլային և մյուս ռեալիստ գրողներին մեկնաբանելու աշխարհայացքային ըմբռնումների և գեղարվեստական պատկերավորման տեսակետից։ Վերհանված է նաև ռեալիստական գրաքննադատության ազգային ինքնատիպ երանգներից մեկը, որ դրսևորվել է գավառական գրականության շուրջ բանավեճի միջոցով։ Ըստ էության, գավառական գրականությունը հարստացնում է արևմտահայ գրականությունը (պոլսահայ գրականությունը) կենսական ավյունով և ճշմարտացիությամբ, նրանով, ինչը արևելահայ գրականության առավելությունն էր համարվում դեռևս 1880-1890-ական թթ. հայ գրաքննադատության մեջ։ «Վաղվան գրականության» հիմնահարցը փաստորեն դիտարկվում է համազգային ռեալիստական գրականության զարգացման հեռանկարով։ Նկատի ունենք առաջին հերթին Մալկարացի Կարոյի (Արտ. Հարությունյան) և Հովի. Գազանճյանի բանավեճի («Բյուրակնում» և «Մասիսում») ինքնատիպ բովանդակավորումը գրքում։ Ասենք, որ իր վերլուծումներում հեղինակը չի շրջանցել նաև զուտ անհատական, մարդկային խառնվածքի գործոնը, որ բխում է բանավեճերն ըստ ամենայնի գնահատելու՝ հեղինակի ճիշտ սկզբունքից։ Այդ պարզորոշ դրսևորվել է Շիրվանզադեի պիեսների շուրջ ծավալված բանավեճերի (Համբ. Առաքելյան, Լեո, Ա. Տերտերյան, Ն. Աղբալյան, Մ. Մատենճյան) քննությանը վերաբերող էջերում։ Հեղինակը, նույն կերպ, աչքաթող չի արել բանավեճի գործնական նշանակությունը՝ դրա հակադարձ կապը գրականության հետ, Շիրվանզադեի ստեղծագործական մոտեցումների (դրանց մեջ փոփոխությունների) օրինակով։ Բանավեճերի քննարկման ժամանակ Դ. Պետրոսյանը ի հայտ է բերում պարբերականների գրական դիրքորոշումները, դրանց ձևավորումը գեղագիտական նոր ըմբռնումների բախման պայմաններում։ 1910-ական թթ. մամուլի այդ պահվածքը, ասել կուզի՝ տեսական նոր ուղիների յուրացումը, նա լրացնում է գրական երեկույթների, դասախոսությունների և այլնի բովանդակալի զուգադրմամբ, որ առանձնապես զգալի է Գր. Զոհրապի (մասամբ՝ գլուխ II), ինչպես և սիմվոլիզմի գրական նորագույն հոսանքների տարբըմբռնումներին վերաբերող հատվածներում (գլուխ III)։

1910-ական թթ. գրական նշանակալի բանավեճերը քննարկվում են աշխատության վերջին՝ IV գլխում, որտեղ կուզենայինք առանձնացնել ընդհանրացնող եզրակացությունները հայ գեղագիտական ու գրաքննադատական մտքի հասունացման, գրականության վաղվա օրվա հանդեպ տեսական մտահոգությունների գնահատումը հեղինակի կողմից։ Նա համոզում է, որ եթե վրա չհասնեին Առաջին աշխարհամարտն ու ցեղասպանությունը, «հայ գրականության գալիքը նախանշող լավագույն կանխատեսումները կիրականանային»։

Իբրև լայն ընդգրկումների և գրականագիտական մտքի զարգացման կարևորագույն փուլերից մեկի արժեքը վերհանող ուսումնասիրություն, աշխատությունը չէր կարող վիճահարույց կողմեր չունենալ։ Նշենք դրանցից մի քանիսը.

1. Կարծում ենք՝ անհարկի ծավալուն տեղ է հատկացված (I գլխի 1-ին ենթաբաժնում) բանավեճի պատմության և տեսության հիմնահարցերին, որ անհամամասնություն է ստեղծում աշխատության ընդհանուր կառույցում։

2. Հեղինակը երբեմն տուրք է տալիս նկարագրական ոճին, որ հատկապես նկատելի է Շիրվանզադեի պիեսներին վերաբերող հատվածում (II գլուխ, 4-րդ ենթագլուխ), և որը ձգձգված է դարձնում շարադրանքը։

3. Գլուխ IV-ը վերնագրված է՝ «Քննադատությունը ներհակ դիրքորոշումների պայքարում»։ Բայց այդպես կարելի էր վերնագրել արդեն իսկ բանավեճին վերաբերող այս աշխատության գրեթե բոլոր գլուխները։

4. «Արևելյան մամուլի» «հոդվածագիր Ապրսամը…» (էջ 63)։ Բայց Ապրսամը ոչ թե սոսկ հոդվածագիր է, այլ «Արևելյան մամուլի» խմբագիր

Մ. Մամուրյանը, որն այդ ծածկանունով է ստորագրել 1881-1900 թթ.: Այս դիտողությունը՝ ընդամենը լրացման կարգով:

Ասվածը դույզն-ինչ չափով չի նվազեցնում աշխատության գիտական բարձր արժեքը, մամուլ - գեղագիտական միտք - գրաքննադատություն բազմաբովանդակ կապերի ու հարաբերությունների բացահայտման նոր ուղղությունը, որի հեղինակն է Դավիթ Պետրոսյանը: Ամբողջ աշխատությունը կառուցված է փաստական հաստատուն և բազմակողմանի հենքի վրա, օգտագործված է պատկառելի չափերի հասնող գրականություն: Խորը վերլուծությամբ և մնայուն ընդհանրացումներով հագեցած այս գործը, հիրավի, լուրջ ներդրում է լրագրության պատմության և միանգամայն գրականագիտական մտքի արդիական հետազոտությունների մեջ:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր